

Լյուդվիկ Դավթյան
Իրավաբանական գիտությունների թեկնածու

Միջազգային այցելու հետազոտող

Լոզանի համալսարանի Քրեական գիտությունների և իրավագիտության
ֆակուլտետ, Լոզան, Շվեյցարիա, 2012

**ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՄԱՀՄԱՆՈՒՄԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՄԻՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՐՊԵՄ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԱՊԱՑՈՒՅՆԵՐԻ ՓՈԽԱԴԱՐՁ
ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆ**

ԵՄ-ում փոխադարձ ճանաչման (ՓՃ) սկզբունքից բացի, անդամ պետությունների *օրենսդրության ներդաշնակեցումը (համապատասխանեցումը) ընդհանուր նվազագույն կանոններին* դիտվել և դիտվում է միջազգային համագործակցության կարևոր ուղղություններից մեկը: Այս առումով, Լիսաբոնի պայմանագրի 82-րդ հոդվ. 2-րդ մասը Եվրախորհրդարանին և Խորհրդին իրավունք է վերապահում, ՓՃ սկզբունքի կիրառումը միջսահմանային բնույթ ունեցող քր. գործերի քննության գործընթացում հեշտացնելու նպատակով, հաստատել *նվազագույն կանոններ՝ դիրեկտիվներ (հրահանգներ) ընդունելու ճանապարհով, որոնք, ի թիվս այլ հարցերի, կվերաբերեն նաև պետությունների միջև ապացույցների փոխադարձ թույլատրելիությանը:*

Ընդհանուր նվազագույն կանոններ սահմանելու անհրաժեշտությունը նախատեսված է նաև 2009թ. Մտկեհովմի Գործողությունների ծրագրում (կետ 3.3), որի համաձայն՝ անհրաժեշտության դեպքում ԵՄ-ն կարող է հաստատել նվազագույն ընդհանուր չափանիշներ ՓՃ սկզբունքի կիրառումը հեշտացնելու համար: 2009թ. ծրագրում շեշտվում է նաև անդամ պետությունների օրենքների՝ որոշակի մակարդակով մերձեցման անհրաժեշտությունը: Այդ նպատակով դրա իրականացման ժամանակացույցով¹ Եվրոպական Հանձնաժողովի վրա պարտականություն դրվեց հանդես գալ օրենսդրական առաջարկներով օտարերկրյա ապացույցների ձեռք բերման միասնական համակարգի, ինչպես նաև դրանց թույլատրելիության ապահովմանն ուղղված ընդհանուր նվազագույն չափանիշների վերաբերյալ:

Ապացույցների ձեռք բերման միասնական ռեժիմի սահմանման և թույլատրելիության նվազագույն կանոնների ընդունման ԵՄ մտադրությունը ողջունելի է, սակայն, կարծում ենք, այս կապակցությամբ հիմնական մտահոգությունը պետք է լինի այն, որ ընդհանուր նվազագույն կանոնները չեն կարող արդյունավետ լինել ապացույցների բոլոր տեսակների համար միաժամանակ (այդպիսի մոտեցում է դրսևորվել թե՛ 2008թ. ՇՈ-ում, թե՛ 2010թ. Հրահանգի առաջարկում): Մեր կարծիքով, անհրաժեշտ է ընդհանուր

¹ Action Plan Implementing the Stockholm Programme, Brussels, 20.04.2010, COM(2010) 171 final:

նվազագույն չափանիշներ սահմանել յուրաքանչյուր տեսակի ապացույցի և դրա ձեռք բերման միջոցների համար առանձին: Դա պայմանավորված է ապացույցների առանձին տեսակների առանձնահատկություններով, որոնց առկայությունը չի կարող թույլ տալ տարբեր տեսակի ապացույցների համար կիրառել դրանց թույլատրելիության որոշման միատեսակ մոտեցումներ: Ապացույցների որոշակի տեսակներն ընդհանուր չափանիշների չեն կարող ենթարկվել այլ ապացույցների թույլատրելիության հետ մեկ ամբողջության մեջ, հետևաբար՝ ենթակա են ընդհանուր «չափանիշավորման» ապացույցի մյուս տեսակներից գատ: Միասնական, ընդհանուր բնույթի կարգավորումների նախատեսումը կարող է ոչ թե հեշտացնել և արագացնել համագործակցությունը, այլև ընդհակառակը՝ բարդացնել և դանդաղեցնել այն, քանի որ ապացույցների առանձին տեսակների առանձնահատկություններն անտեսելու դեպքում պետությունների իրավասու մարմինները չեն կարողանա ճիշտ կողմնորոշվել պատշաճ որակի ապացույց ստանալու համար ընթացակարգերի ընտրության հարցում: Դա իր հերթին կարող է հանգեցել դժվարությունների կատարողի կողմից այնպիսի գործողություններ իրականացնելիս, որոնք կապահովեն ապացույցի թույլատրելիությունը հայցող պետությունում: Ի վերջո, հայցող մարմինն էլ ի վիճակի չի լինի ճիշտ գնահատել իր իսկ հարցման հիման վրա ձեռք բերված ապացույցների թույլատրելիությունը: Այդ իսկ պատճառով հարկավոր է նվազագույն պահանջներ սահմանել ապացույցի առանձին տեսակների համար առանձին-առանձին՝ հաշվի առնելով դրանցից յուրաքանչյուրի ձեռք բերման, օգտագործման և գնահատման առանձնահատկությունները:

Փորձագիտական ապացույցի ձեռք բերման և թույլատրելիության ընդհանուր նվազագույն կանոններ սահմանելիս՝ անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ հանգամանքները՝ ա) տարբեր պետություններում փորձագիտական գործունեության քրեադատավարական կարգավորումները տարբեր են, բ) պետությանների փորձագիտական հաստատություններն օգտագործում են տարբեր մեթոդիկաներ փորձաքննություններ կատարելիս, գ) փորձագիտական գործունեությունը իրավական և մեթոդաբանական կարգավորումներն անմիջականորեն առնչվում են մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին:

ԵՄ-ում ՓՃ սկզբունքի հիման վրա քր. գործերով միջազգային համագործակցության շրջանակներում ձեռք բերված փորձագիտական ապացույցը որպես ապացուցման թույլատրելի միջոց օգտագործելու համար պահանջվում է նախնառաջ անդամ պետություններում փորձագիտական գործունեությունը կարգավորող քրեադատավարական օրենսդրության ներդաշնակեցում², ինչը ենթադրում է դրանց միջև գոյություն ունեցող տարբերությունների և հակասությունների հարթեցում՝ միջազգայնորեն սահմանված նվազագույն կանոններին համապատասխանեցնելու

² *Klip A., Wilt V.D.H.* Harmonisation and harmonising measures in criminal law. Amsterdam, 2001, էջ 23-29:

ճանապարհով: Այդ նպատակով կարևոր նշանակություն ունի նախ տարբեր իրավական համակարգերի համեմատությունը, ինչը ենթադրում է «Ժամանակի և տարածության մեջ դրանց տարբերությունների և նմանությունների իդենտիֆիկացիա»:³

ԵՄ շրջանակներում քրեական դատավարության տարբեր տիպեր (մեղադրական և մրցակցային) ունեցող երկրների իրավական համակարգերի համեմատությունը ցույց է տալիս, որ փորձագիտական ապացույցների իրավական կարգավորումների առանձնահատկությունները և առանցքային տարբերությունները հատկապես վերաբերում են՝ ա) փորձագիտական ապացույցի հասկացությանը, ձևին, կառուցվածքին և բովանդակությանը, բ) փորձագետի քրեադատավարական կարգավիճակին և նրա որակավորմանը, գ) քր. գործով վարույթին փորձագետի ներգրավման կարգին և նրան ներգրավելու իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակին, դ) փորձագետի վարձատրությանը, փորձաքննության կատարման ծախսերին և ժամկետներին, ե) հատուկ գիտելիքների հասկացությանը և փորձաքննության բնագավառներին, զ) փորձագիտական ապացույցի ձեռք բերման և գնահատման սկզբունքներին:⁴

Փորձագիտական ապացույցին վերաբերող թվարկված ասպեկտները սպառնիչ չեն և կարող են ներառել ապացուցման քննարկվող միջոցին առնչվող այլ դրույթներ ևս: Այնուամենայնիվ, թվարկված և մի շարք այլ հարցերի վերաբերյալ անդամ պետությունների դիրքորոշումների հաշվառմամբ նվազագույն կանոնների սահմանման և դրանց՝ պետությունների օրենսդրության համապատասխանեցման պարագայում միայն այդ կանոնների կիրառման արդյունքում ՓՃ սկզբունքով ձեռք բերված փորձագիտական ապացույցը հայցող մարմնի կողմից կարող է օգտագործվել որպես թույլատրելի ապացույց՝ իր պետությունում իրականացվող վարույթում օգտագործելու համար:

Քրեադատավարական համակարգերի միջազգայնացման գործընթացների համակցության մեջ դատափորձագիտական գործունեության ներդաշնակեցումը պետք է դիտարկել *ոչ միայն իրավական, այլ նաև մեթոդաբանական ասպեկտներով*: Փորձագիտական գործունեությունը գործունեության այնպիսի տեսակ է, որն ունի երկկողմանի կարգավորում. մի կողմից այն ենթարկվում է դատավարական նորմերի կարգավորմանը, մյուս կողմից՝ մասնագիտական-մեթոդաբանական:⁵ Ուստի, ՓՃ սկզբունքի կիրառությունը պահանջում է ոչ միայն պետությունների քրեադատավարական, այլ նաև փորձագիտական գործունեության մեջ կիրառվող մեթոդաբանական նորմերի և չափանիշների ներդաշնակեցում:

³ *Nelken D.* Comparative Criminal Justice: Making Sense of Difference. Sage: Los Angeles, 2010, էջ 31:

⁴ *Champhod Ch., Vuille J., նշվ. աշխ.*, էջ 82-86; *Bondt De W., Vermeulen G.* “Free movement of scientific expert evidence in criminal matters”, in Cools M., Ruyver De B. et al. (eds.) *EU criminal justice, financial & economic crime: new perspectives*. Portland: Maklu, 2011, Vol. 5, էջ 75-84:

⁵ *Nijboer J.F., Sprangers W.J.J.M. (eds.)* Harmonisation in forensic expertise: an inquiry into the desirability of and opportunities for international standards. Leiden, 2000, էջ 399:

Փորձագիտական տվյալների փոխանակելիության, դրանց ճանաչման և որպես թույլատրելի ապացույց օգտագործելու հնարավորությունը առաջին հերթին պայմանավորված է հետազոտության օբյեկտների (օրինակ՝ մատնահետքեր, ԴՆԹ, ներկանյութեր) նույնականացման հատկանիշների միասնական համակարգի առկայությամբ: Այս առումով, տարբեր երկրներում ընդունված են օբյեկտների նույնականացման հատկանիշների տարբեր համակարգեր և հետազոտության տարբեր մեթոդներ, ինչը, մասնավորապես, թույլ չի տալիս ապահովել տարբեր պետությունների տվյալների բազաներում առկա տեղեկությունների համատեղելիությունը, դրանց նույնականացումը և փոխանակման հնարավորությունը ապացուցման նպատակով:⁶ Այս առումով, որոշակի համընդհանուր հիմքեր են անհրաժեշտ տարբեր մեթոդների և տեխնիկական միջոցների գործադրմամբ ձեռք բերված փորձագիտական տեղեկատվության փոխանակումը հնարավոր և մատչելի դարձնելու համար:

Բացի այդ, մեթոդների բազմազանությունը կարող է խոչընդոտել դրանց կիրառմամբ ձեռք բերված տվյալների նկատմամբ վստահության և ներքին համոզմունքի ձևավորմանը, քանի որ «փորձագիտական ապացույցին վստահելու կարիքն ընդհանուր է բոլոր իրավական համակարգերի համար»:⁷ Որպեսզի հայցող պետությունն ի վիճակի լինի ճիշտ հասկանալ և մեկնաբանել օտարերկրյա մեթոդի նշանակությունը և վստահել դրա արժանահավատությանը, այն պետք է համապատասխանի միջազգայնորեն ընդունված նվազագույն չափանիշներին: Հակառակ դեպքում, ՓՃ սկզբունքի գործողության պարագայում հայցող պետությունը ստիպված է ճանաչել կատարող պետության կողմից կիրառված ցանկացած փորձագիտական մեթոդ և թույլատրել դրա արդյունքում ձեռք բերված ցանկացած փորձագիտական ապացույցի օգտագործումը, ինչը կարող է վտանգել ոչ միայն քննության ֆունկցիայի, այլ նաև արդար դատաքննության և պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացմանը: Միայն միջազգայնորեն սահմանված նվազագույն չափանիշներին համապատասխանող փորձագիտական մեթոդների կիրառման դեպքում ՓՃ սկզբունքի հիման վրա իրականացվող համագործակցությունը կարող է լիարժեքորեն ծառայել ապացուցման նպատակին՝ մարդու իրավունքների պատշաճ երաշխավորմամբ:

Քրեադատավարական համակարգերի և մեթոդների ներդաշնակեցումը պետք է զուգորդվի *մարդու իրավունքների պաշտպանության նվազագույն երաշխիքների սահմանմամբ*, քանի որ դատափորձագիտական մեթոդների գործադրումը շատ դեպքերում ենթադրում է մարդու անձնական իրավունքների, մասնավորապես՝ անձնական կյանքի գաղտնիության իրավունքի սահմանափակում: Հատկապես, փորձագիտական այն մեթոդները, որոնք ուղղված են մարդու անհատական նույնականացմանը (օրինակ՝ ԴՆԹ

⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 15:

⁷ **Jakobs L.** “A European view on forensic expertise and counter-expertise”, *Criminal Law Forum* No. 11, 2000, էջ 380:

անալիզ⁸, ձեռագրաբանական, մատնահետքաբանական, տեսա-
ձայնագրաբանական հետազոտություններ), հնարավորություն են տալիս ձեռք
բերելու անձնական բնույթի մի շարք տեղեկություններ:⁹ Հետևաբար, այդ
մեթոդների կիրառումը կարող է իրականացվել միայն մարդու անձնական
կյանքի գաղտնիությունը երաշխավորող իրավական դրույթների ամրագրմամբ
և պահպանմամբ: Հարկ է նշել սակայն, որ մարդու անհատական
նույնականացմանն ուղղված փորձագիտական մեթոդները ոչ բոլոր
երկրներում են ենթարկված իրավական կարգավորման: Ուստի,
փորձագիտական մեթոդների չափանիշների միջազգային սահմանումը պետք է
գուգորդվի մարդու իրավունքների պաշտպանության նվազագույն
երաշխիքների սահմանմամբ՝ որպես քր. գործերով միջազգային
համագործակցության շրջանակներում փորձագիտական ապացույցի
փոխադարձ թույլատրելիության նախապայման: Այդ գործընթացին պետք է
հետևի անդամ պետությունների օրենսդրության մերձեցումը սահմանված
նվազագույն չափանիշներին: Միայն միջազգայնորեն ընդունված նվազագույն
կանոններին համապատասխանող ներդաշնակ իրավական համակարգերի
գործողության դեպքում հնարավոր կլինի առավել քան արդյունավետ կերպով
գործադրել ՓՃ սկզբունքի վրա հիմնված համագործակցության ողջ
զինանոցը՝ քննության ու պաշտպանության ֆունկցիաների լիարժեք
հավասարակշռմամբ:

Ավելացնենք նաև, որ անձնական կյանքի գաղտնիության իրավունքի
պաշտպանությունը փորձագիտական գործունեության շրջանակներում
ուղղակիորեն առնչվում է ԵՄ-ում անձնական տվյալների պաշտպանության
ռեժիմին, որը կարգավորվում է այդ ոլորտում ընդունված մի շարք
փաստաթղթերով:¹⁰ Այդ իսկ պատճառով մարդու անձնական իրավունքներին
սպառնացող փորձագիտական մեթոդների նվազագույն իրավական
կարգավորումը պետք է իրականացվի անձնական տվյալների
պաշտպանության ռեժիմի պահանջները հաշվի առնելով:

Եզրակացություն

ՓՃ սկզբունքի՝ նախապայմաններից անկախ կիրառումը կարող է տանել
փորձագիտական ապացույցի թույլատրելիության *a priori* ճանաչմանը, ինչը
կարող է վտանգել պաշտպանության և արդար դատաքննության
իրավունքների երաշխավորված պաշտպանությունը: Փորձագիտական
ապացույցի ձեռք բերման գործընթացի համապատասխանությունը կատարող
պետության ազգային իրավունքին բավարար երաշխիք չէ դրա «ազատ

⁸ *Kastanidou-Symeonidou E.* “DNA Analysis and Criminal Proceedings: the European Institutional Framework”, in *European Journal of Crime, Criminal Law and Criminal Justice*, 2011, Vol. 19, էջ 139-140:

⁹ *Nijboer J.F., Sprangers W.J.J.M. (eds.)*, նշվ. աշխ., էջ 127:

¹⁰ *Vermeulen G. et al.* Availability of law enforcement information in the European Union: between mutual recognition and equivalent right of access. Antwerp: Maklu, 2005, էջ 7-12:

տեղաշարժի» և հայցող պետությունում վերջինիս թույլատրելիությունը երաշխավորելու համար՝ պետությունների քրեադատավարական համակարգերի և դատափորձագիտական մեթոդիկաների միջև գոյություն ունեցող տարբերությունների պարագայում:

ՓՃ սկզբունքը չպետք է *«մեխանիկորեն»* հանգեցնի ապացույցի թույլատրելիության այն հաշվով, որ վերջինս ձեռք է բերվել օտարերկրյա պետության ազգային իրավունքին համապատասխան: Այս սկզբունքը կարող է ծառայել ապացույցների թույլատրելիության նպատակին, եթե պետությունների քրեադատավարական համակարգերի և դատափորձագիտական գործունեության հիմքում ընկած են ընդանուր նվազագույն կանոններ: Այդպիսի նվազագույն կանոնների սահմանման պարագայում միայն հայցող պետությունը հնարավորություն կունենա ձեռք բերելու *«մրցունակ»* փորձագիտական ապացույցներ, վստահել դրանց ձեռք բերման մեթոդի ճշգրտությանը և ճանաչել փորձագիտական ապացույցի թույլատրելիությունը՝ ապահովելով մարդու իրավունքների պաշտպանության երաշխիքների առավելագույնս կենսագործումը: